

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ. Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Երևան, «Նաիրի» հրատ., 2010, 372 էջ:

Հայոց լեզվի պատմության ուշագրավ երևույթներից մեկը լատիներենի հետևության վերափոխված գրաբարի ժամանակաշրջանն է (XIV–XVIII դդ.), որ լեզվաբանական գրականության մեջ ստացել է «լատինաբան հայերեն» անվանումը:

Այս ուղղության ներկայացուցիչները նպատակ ունենին լատիներենի նմանության վանդակարգել գրաբարը: Սակայն հայերենին խորթ, արհեստական կաղապարները չարմատավորվեցին մեր լեզվում և XVIII դարում աստիճանաբար վերացան, թեև լատինաբանության հաղթահարումից հետո ևս որոշ հետք թողեցին, մասնավորապես նոր բառերի կազմության մեջ:

Եվ միանգամայն օրինաչափ է, որ մոտ չորսդարյա պատմություն ունեցող սույն երևույթը չէր կարող անտարբեր թողնել բանասերներին ու լեզվաբաններին: Լատինաբան հայերենով գրված աղբյուրների տեսությանը հայեցակերպային տարբեր մոտեցումներով անդրադարձել են հայ և օտարազգի անվանի մտավորականներ Միք. Չամչյանը, Դ. Ալիշանը, Հ. Գեյցերը, Վ. Բրյուսովը, Հ. Մանանդյանը, Ա. Հովհաննիսյանը, Լ. Խաչիկյանը, Գ. Չարբհանյանը, Ե. Դուրյանը, Մ. Աբեղյանը, Ս. Արևշատյանը, Մ. Օրմանյանը, Ա. Բագրատունին, Ա. Այտրնյանը, Հ. Աճառյանը, Էդ. Աղայանը, Գ. Ջահուկյանը և այլք: Սակայն առկա ուսումնասիրությունները, ունենալով մասնակի բնույթ, չէին կարող այս կամ այն չափով սպառիչ համարվել:

Ուրախությամբ պիտի նշենք, որ այսօր սեղանին է դրված բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանի «Լատինաբան հայերենի պատմություն (14–18-րդ դդ.)» ծավալուն աշխատությունը, մանրակրկիտ ու բազմակողմանի մի հետազոտություն, որը հեղինակի բազմամյա գիտական պրպատումների ամփոփումն է:

Բավական է աչքի անցկացնել Բովանդակության վերնագրերի, մատենագիտական աղբյուրների ու օգտագործված գրականության ցանկերը, պատկերացում կազմելու համար կատարված հսկայական աշխատանքի և նյութի ընդգրկման սահմանների մասին:

Ճշմարիտ գիտնականին բնորոշ բծախնդրությամբ Վ. Համբարձումյանը գրքի չորս ընդարձակ գլուխներում համալիր քննության է առել նյութին առնչվող կարևորագույն խնդիրները:

Ներածության մեջ հեղինակը փաստում է, որ հայ-լատինական հարաբերությունները հաստատվել են լատինաբան հայերենի առաջացումից (XIV դար) շատ ավելի առաջ և, բնականաբար, հանդիսացել վերջինիս նախադրյալը: Կիլիկյան հայկական իշխանությունը քաղաքական և տնտեսական նկատառումներով շփվում էր Արևելքում հաստատված խաչակիրների իշխանությունների հետ, ինչը, ըստ էության, հայ-եվրոպական ընդհանուր մշակութային առնչությունների մի յուրատեսակ դրսևորում էր:

Առաջին գլուխն անդրադարձ է լատինաբանության ուսումնասիրության պատմությանը: Առկա է հարցի արծարծումը ժամանակի գրավոր աղբյուրներում, ինչպես նաև՝ մեկնաբանությունն ու գնահատությունը հայագիտական աշխատություններում: Նշենք, որ արտահայտված յուրաքանչյուր կարծիք կամ տեսակետ ուղեկցվում է հեղինակի անձնական դիրքորոշմամբ՝ ընդունելի կամ մերժելի լինելու հիմնավորումով:

Ուսումնասիրության երկրորդ գլխում Վ. Համբարձումյանը իր առջև խնդիր է դրել ժամանակի ծավալուն գրականության մեջ առանձնացնել լատինաբան հայերենով գրված սկզբնաղբյուրները, ժամանակագրորեն դասակարգել և տեսականորեն բնութագրել դրանք, ինչը նրան լիովին հաջող-

վել է: Եվ որպես վերջնարդյունք ճշգրտվել է լատինաբան հայերենի գոյատևման ժամանակաշրջանը: Հայտնի է, որ առավել տարածված է եղել երկդարյա շրջանի մասին կարծիքը (Ա. Մուրադյան, Հ. Պետրոսյան և այլք): Վ. Համբարձումյանը փաստացի նյութի մանրակրկիտ քննությամբ և անատրկելի ապացույցներով հաստատում է 460-ից ավելի տարիներ ընդգրկող մի ժամանակահատված (XIV դ. 10-ական թթ. կեսերից մինչև XVIII դ. 80-ական թթ. սկիզբը), ինչը սույն աշխատության կարևորագույն արժանիքներից մեկը պիտի համարել:

Աշխատության հեղինակն իրավացիորեն նշում է, որ լատինաբան հայերենը, ըստ էության, եղել է «տունձգություն» լեզվի բնականոն զարգացման նկատմամբ: Մակայն այն միաժամանակ արդյունք է որոշակի կամեցողության. հայ մշակույթը թարմացնելու, «եվրոպականացնելու» միտում, միաբարական կրթական, գիտական-թարգմանական գործունեության ծավալում, հայ իրականության մեջ հոգևոր նոր մոտեցում մշակելու և մշակութային նոր արժեքներ ստեղծելու ձգտում և այլն:

Համեմատելով գրական հայերենի հունարան ու լատինաբան տարբերակները և զարգացնելով արտահայտված տեսակետները՝ Վ. Համբարձումյանը առաջ է քաշում ծագումնաբանական և կառուցվածքային ընդհանրությունների ու տարբերությունների, բառակազմական առանձնահատկությունների, կենդանի և մեռած լեզուների առնչակցության, ինչպես նաև համարանության չափանիշները, որոնց վրա էլ խարսխվում է հայերենի հունարան և լատինաբան տարբերակների լեզվական մանրագնի քննությունը: Հեղինակը, ի թիվս այլոց, կատարում է մի նուրբ դիտարկում. հունարան հայերենը ստեղծվում է հին, արդեն մեռած հունարենի և ժամանակի կենդանի գրաբարի առնչակցությամբ, իսկ լատինաբան հայերենը՝ մեռած լատիներենի ու մեռած գրաբարի, կարևոր մի իրողություն էրկու օտար ազդեցություններին տարբերակված գնահատական տալու համար:

Չպետք է մոռանալ, որ եթե հունարան հայերենը ձևավորվել ու զարգացել էր Հայաստանում՝ հունարենով շարադրված գիտական և դավանաբանական գրականությու-

նունք հնարավորինս հարագատորեն վերարտադրելու մղումով, ապա լատինաբան հայերենը սկիզբ էր առել Եվրոպայում և տարածվել պարտադրաբար, ըստ էության, կաթողիկոսությունը ծավալելու նպատակով: Ուստի, հունարան հայերենի հետ լատինաբան հայերենի համեմատության պարագայում ցանկալի կլինեք ավելի ցայտուն տեսնել երկու ուղղությունների (կամ դպրոցների)՝ հայ գրական լեզվի վրա թողած ազդեցության հետևանքը, քանի որ հունարան դպրոցի գործունեությանն անդրադառնալիս արձանագրելի է մնայուն արգասիք, մասնավորապես քերականական եզրաբանության ոլորտում (բազմաթիվ պատճենումներ ու ազատ թարգմանություններ, որ գործածական են առ այսօր՝ առոգանություն, արական, բաղաձայն, բաղդատական, բայ, բարդություն, դերանուն, երկբարբառ, հոլով, ձայնավոր, ստացական, ստորադասական, ստորակետ, տրական և այլն)<sup>1</sup>, ինչը չենք կարող ասել լատինաբան հայերենի դեպքում:

Աշխատության հաջորդ գլուխը, որն ամենածավալունն է, ամփոփում է լատինաբան հայերենի հնչյունական, ձևաբանական, շարահյուսական ու բառապաշարային առանձնահատկություններին վերաբերող հարուստ փաստացի նյութի համակողմանի քննությունը:

Գրախոսվող գրքի ակնհայտ արժանիքներից է լատինաբան հայերենի դիտարկումը հայոց լեզվի պատմության նախորդ և հաջորդ փուլերի ամբողջական շղթայի մեջ, ինչպես նաև ժամանակաշրջանի պատմաքաղաքական, տնտեսական ու ընդհանուր մշակութային հանրանկարի վրա:

Գրաբարի և լատիներենի խոր իմացությունը մեծապես նպաստել են հեղինակին ստեղծելու մի աշխատություն, որը, մեր խորին համոզմամբ, իր մնայուն տեղը պիտի գրավի հայոց լեզվի ընդհանուր, և մասնավորապես, նրա պատմությանը նվիրված լավագույն հետազոտությունների շարքում:

ԱՐԱՄ ԲԱՐԼԵՁԻԶԱՆ

<sup>1</sup> Տե՛ս Ա. Ն. Մուրադյան, Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության հարստացման գործում, Երևան, 1971: